

ներն, Շահ Աբասի բանակին մէջ (յԱգուլի^օս), ուր կը գտնուէր ուրիշ հայ իշխաններու հետ: Իր բարեխօսութեամբ ազատեցաւ Մելիքիսեդեկ Շահին սպառնալիքէն: Դաւրիթեցի (էջ 219) այս դէպքը կը պատմէ տեղի ունեցած 1617ին յԱգուլիս կամ ի Դանդի. «Ի ժամանակին յայնմիկ արք խորհրդականք եւ երեւելիք, որք էին ի դուռն արքային», անոնց թուին մէջ «Խոջայ Նազարն եւ Խոջայ Սուլթանումն եւ Միրվէլին եւ Մելիք Հայկազն», խորհուրդ կու տան կաթողիկոսին, որ տայ Շահէն նշանակուած տուգանքն եւ ազատի կապանքներէն:

1615ին կը հիմնարկէ Մելիք Հայկազն իւր իշխանութեան սահմաններու մէջ Հօջանց աւանապատը. Դաւրիթեցի կը գրէ. «Տէր Կիրակոսն եւ Թումայ եպիսկոպոսն գնացին յերկիրն Քչտաղս մերձ ի գիւղն Հօջանց. շինեցին Անապատ եւ անդ բնակեցան» (էջ 260): Անապատին նաւակատիքը խմբուեցաւ 1615ին, ի ներկայութեան բազմաթիւ եկեղեցականներու. Մովսէս վարդապետ կը յիշէ զայն իւր առ Գրիգոր Կեսարացի թղթին մէջ այսպէս. «Սուրբ Խաչին տօնին նաւակատիս եղեւ նորակերտ եկեղեցւոյ, զոր շինեալ է բարեպաշտ աստուածասէր իշխանն Հայկազ ի իւր սեփական գիւղն»². Թէպէտ գիւղը յանուանէ չի յիշատակուիր, բայց — ինչպէս ինձ կը թուի — պէտք է նոյնացնել Հօջանց գիւղին հետ:

² Տես վերը, էջ 29: